

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 43/1

10 սեպտեմբերի 2013 թ.

Քննարկվեց «Պ.Սարգսյան և Ընկերներ» ՍՊԸ 05.08.2013 թ-ի գանգատը «ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 23.07.2013 թ-ի թիվ 2116039 ստուգման ակտի դեմ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Հարկային տեսուչ Ներսես Նալբանդյանի կողմից 12.07.2013 թ-ին ժամը 15:50-ին ք.Երևան, Գայի 19 հասցեում գտնվող պատճենահանման կետից կատարվեց հսկիչ գնում (մատուցվեց ծառայություն) 20 դրամի չափով՝ պատճենահանման ծառայություն, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Պատճենահանող Ելենա Ասպանդուրյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգումն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 15:55-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Z հաշվետվություն՝ 4340 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 20 դրամը, ժամը 15:56-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և նորից դուրս բերվեց Z հաշվետվությունը՝ 20 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <գ> ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Սկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

«Պ.Սարգսյան և Ընկերներ» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

«ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ կողմից մեզ ներկայացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թիվ 2116039 ակտի հետ համաձայն չեմ հետևյալ պատճառաբանությամբ.

Ակտում նշված է, որ հսկիչ գնումն իրականացրել է Ներսես Նալբանդյանը, այսինքն՝ ստուգումը կատարող երկու տեսուչներից մեկը: Դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ մեր հարցին, թե ով է իրականացրել հսկիչ գնումը, ծառայողական վկայականները ներկայացրած հարկային ծառայողները պատասխանեցին, որ հսկիչ գնումը կատարել է երրորդ անձը՝ նրանց ասելով իրենց աշխատողը: Քանի որ, մենք համաձայն չէինք նրանց ներկայացրած մեղադրանքի հետ այն պարզ պատճառով, որ նման բան չէր եղել ու չէինք կարողանում ապացուցել մեր անմեղությունը, պահանջեցինք, որ ներկայանա այն մարդը, որն իբր կատարել էր գնումը: Նրանք զանգահարեցին և կանչեցին իրենց աշխատակցին: Ներկայացավ մի երիտասարդ, որին առաջին անգամ էինք տեսնում և 10-15 րոպե առաջ գնում կատարած հաճախորդի դեմքը հազիվ թե մոռանայինք, մանավանդ, որ նա շատ հիշվող ու տպավորիչ դեմք ուներ: Բացի դա, եթե գնումը հենց իրենք՝ այդ երկու հարկային տեսուչները կատարած լինեյին, մեզ ներկայանալով չէին հարցնի, թե ով է վերջին 10-15 րոպեների ընթացքում սպասարկել: Եթե հսկիչ գնումն իրենք էին կատարել, ապա պետք է շատ լավ իմանային, թե ով է իրենց սպասարկել: Կամ, եթե ներկայացնում են երրորդ անձին՝ գնում կատարողին, ինչո՞ւ ակտում ոչինչ չեն գրում նրա մասին:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի՝ հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգի 1.4 կետում նշվում է «...հսկիչ գնումն այլ անձի միջոցով /անձի գրավոր համաձայնությամբ/ իրականացնելու դեպքում հանձնարարագրում նշվում են նաև այդ անձի տվյալները...»: Իսկ

մեզ ներկայացված թիվ 2116039 հանձնարարագրում նշված են միայն Ներսես Նալբանդյանի և Դավիթ Դրամբյանի անունները: Երրորդ անձի՝ գնում կատարողի մասին ոչինչ չկա գրված:

Ակտում նշված է նաև, որ հսկիչ գնումը կատարվեց Ներսես Նալբանդյանի կողմից 15:50-ին, որից անմիջապես հետո հարկային ծառայողները ներկայացրին իրենց վկայականները և ստուգման հանձնարարագիրը ու ժամը 15:55-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը: Սա նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ նրանք չեն ներկայացել հսկիչ գնումը կատարելուց անմիջապես հետո: Մեզ ներկայանալով նրանք հարցրեցին, թե վերջին 10-15 րոպեների ընթացքում ով է սպասարկել: Այս հարցն անիմաստ կլիներ տալ, եթե ներկայացել էին ինչպես իրենք էին ասում հսկիչ գնում կատարելուց անմիջապես հետո: Այդ խոսակցությանը ներկա Նոնա Ղազարյանը, որը եկել էր իմ խնդրանքով, նրանց հարցրեց, թե արդյո՞ք ՀԴՄ կտրոն չտրամադրելուց անմիջապես հետո չպետք է ներկայանային, որպեսզի ֆիքսեին կատարված օրինախախտումը, նրանք պատասխանեցին, որ իրենք իրավունք ունեն ներկայանալ 10-15 րոպեների ընթացքում:

Իմ մեղավորությունը ապացուցելու համար հարկային ծառայողները պետք է անմիջապես ներկայանային, ինչպես դա նշված է ակտում, այլ ոչ թե 10-15 րոպե անց, երբ արդեն այլևս ոչինչ հնարավոր չէր լինի ապացուցել ոչ մեր կողմից, ոչ իրենց: 10-15 րոպե անց գալով ինչպե՞ս է հնարավոր ապացուցել, որ գնում կատարողը (եթե իհարկե գնում է կատարել) մեկ էջի պատճենահանում է կատարել, այլ ոչ թե մի քանի էջի, ստացել է իր կտրոնը, որից հետո մեկ էջի ՀԴՄ կտրոնի պահանջով ներկայացել մեզ: Եվ վերջապես իրենք ինչպե՞ս կարող են ապացուցել, որ 20 դրամի պատճենահանումը կատարվել է ոչ թե 15 րոպե, այլ՝ մեկ ժամ առաջ, որի կտրոնը առկա է և ներկայացվում է:

Բացի այդ, հարկային ծառայողները ծառայողական վկայականները ներկայացնելուց անմիջապես հետո հանեցին <Z> հաշվետվությունը, հարցրեցին թե ով է սպասարկել, հայտնեցին ՀԴՄ կտրոն չտրամադրելու մասին, որից հետո միայն նշեցին չմուտքարված գումարի չափը: Ինչպես կարող եմ վստահ լինել, որ հաշվետվությունը հանելուց հետո, նա չի ասել հենց այն գումարի չափը, որը բացակայում էր այդ հաշվետվության մեջ:

Ներկայացնում եմ նաև հարկային ծառայողների ներկայանալուց ընդամենը մեկ րոպե առաջ /ժամը 15:54-ին/ մատուցված ծառայության դիմաց ՀԴՄ մուտքագրված 2000 դրամի կտրոնը: Վստահեցնում եմ, որ այդ ժամին հարկային ծառայողները դեռևս չէին եկել, որովհետև մտնելուց, ներկայանալուց անմիջապես հետո, նրանք հանեցին <Z> հաշվետվությունը, և եթե հաշվետվության վրա ֆիքսվել է 15:55-ը, ուրեմն նրանք ներս են մտել հենց այդ ժամին:

Ելնելով վերոգրյալից <Պ.Սարգսյան և Ընկերներ> ՍՊԸ-ն խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 23.07.2013 թ-ի թիվ 2116039 ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Պ.Սարգսյան և Ընկերներ> ՍՊԸ ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ սուգումն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ: Մասնավորապես, քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի ժամանակավոր պաշտոնակատարի 11.07.2013 թ-ի թիվ 2116039 հանձնարարագրի <Պ.Սարգսյան և Ընկերներ> ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 23.07.2013 թ-ի թիվ 2116039 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Սույն գործի քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգման ակտում նշված հսկիչ գնումը կատարվել է ոչ թե Ներսես Նալբանդյանի, այլ՝ երրորդ անձի կողմից:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է հիշատակել ոլորտը կարգավորող հետևյալ իրավանորմերի դրույթները:

<Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. <Սույն օրենքով նախատեսված հսկողության իրականացման նպատակով հարկային մարմինը <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան իրականացնում է ստուգումներ և ուսումնասիրություններ, ընդ որում՝ ստուգումներ անցկացնելու հանձնարարագրի վավերապայմանների, դրանք ստուգվող սուբյեկտին ներկայացնելու պահանջների նկատմամբ կիրառվում են <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի դրույթները>:

Իր հերթին, <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 1.4 կետի համաձայն. <1.4. Հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսվարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները և հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի կնիքով: Ընդ որում, հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում հանձնարարագրում նշվում են նաև այդ անձի տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրային տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը)>:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ իրականացված ստուգման ընթացքում խախտվել են վերը նշված իրավական նորմերի պահանջները:


<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի համաձայն, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 23.07.2013 թ-ի թիվ 2116039 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ